

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ

[Ա.]'

1 [Յ]Աստուածաշունչ² գիրս ոչ գտան³ կատարեալ գիտութիւն աշխարհաց որպիսութեանց, վասն որոյ հարկաւորիմք ձեռնարկել յարտաքինսն, որք զաշխարհագրութիւն յարմարեցին ի ճանապարհորդութենէ⁴ եւ ի նաւարկութենէ, եւ ստուգեցին յերկրաչափութենէ, եւ ինքն⁵ երկրաչափութիւն⁵ գտաւ յաստեղաբաշխութենէ: 2 Քանզի ուշ եղեալ խոկացին, թէ ո՛ր տեղիք երկրի ընդ որո՞վք իցեն⁶ կարգեալ յերկնային բոլորակին, եւ զմեծութիւնն տուրնջեան եւ գիշերացն: 3 Եւ զոր ի վերայ երկրի եւ զոր ի ներքոյ երկրի՝ միշտ բերելով՝ յայտնեն եւ զբնակութիւնն մարդկան, ի միջաւրէական⁷ գծէն⁸ զգիրսն առնելով ասպարիսական չափով՝ ի նաւարկութենէ եւ ի ճանապարհորդութենէ [1բ] իմացեալ զկայանսն եւ զփոփոխեալսն, եւ զայլ՝ այլուր այլապէս երեւեալն: 4 Քանզի ի վերայ Այրեցածին բերին կենդանատեսակքն, մտանեն եւ ծագեն՝ բայց Փոքր Արջն գեր ի վերոյ կալով երկրի, ի հիւսիսային կողմանն՝ ասպարիսաւք հինգ հարիւր եւ երկու⁹ հինգերեկաւք, եւ անդէն¹⁰ զԹուրիս կղզի, որ մեկնէ զհիւսիսականացն անց:

- 1 V Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ ասացեալ փյա Աշխարհացոյց. [Ա] (վեր., այս վերնագիրը եւ 2 տող (մինչեւ գիտութիւն) կարմրով եմ)
- 2 V Աստուածաշունչ փյա ՅԱստուածաշունչ (վեր. Սուրբեանի. թերեւս, գրիչը Յ սկզբնատառը բաց է թողել՝ հետագայում գունագարդ նկարելու համար, այսպէս, ինչպէս յաճախ՝ մոռացել է դա անել)
- 3 V գտանուի փյա գտանի (վեր. Սուրբեանի. հմմտ. նախ. Ա.33, Ե.42, 128, 134, 141 եւմ)
- 4 V ճանապարհորդութենէ փյա ճանապարհորդութենէ (վեր. Սուրբեանի՝ ըստ նախ. Ա.3, 7, Ե.285)
- 5 V յերկրաչափութիւն փյա երկրաչափութիւն (վեր. Սուրբեանի)
- 6 V իցին փյա իցեն (վեր. Սուրբեանի)
- 7 VS մէջաւրէական փյա միջաւրէական (վեր.՝ ըստ հետագայի. տե՛ս, օր.՝ նախ. Ա.5)
- 8 V գծեն փյա գծէն (վեր. Սուրբեանի)
- 9 V 2բ
- 10 Սուրբեանը տողատակում ծանոթագրել է «Թերեւս ամր դնեն. իսկ այլ Օր. աւանդեն»

5 եւ¹¹ զծանուցելոյ երկրիս [Իբրեւ] զգլխիտ՝ ըստ¹² լայնութեանն վաթսուն եւ երեք¹³ եւ եւթնեւտասն¹⁴, որպէս միջաւրէական շրջանակն երեք հարիւր վաթսուն եւ երեք¹⁵ բիւրաւք, եւ վեց հազարեկիւք¹⁶ մասամբք հինգ հարիւր¹⁷ չափուց ասպարիսաց՝ մերձ շուրջունողութեամբ¹⁸:

6 Իսկ¹⁹ հարաւայինն խոնարհի ի սուզականն, եւ այլակերպ զայլս երեւեցուցանեն. որպէս Դէո[դո]րոս²⁰ Սամիացի ասէ զՀնդկաց, եթէ ի Կիմ[եռ]իկոն²¹ նաւելով, ունելով զՏաւրոն²²՝ միջնեկնեայ եւ զՊղայիդայ²³՝ ընդ մէջ Կեռեայ: 7 Իսկ²⁴ յԱզանիս նաւելով առ Միջերկրականն՝ զԿանաբոս աստղ, որ է Իպպոս՝ ի նոցանէ երե-

- 11 V-ում Ե-ն գլխատառով է, կարմրով եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է
- 12 VS գործատ փյա [իբրեւ] զգլխիտ՝ ըստ (վեր.՝ ըստ համառօտի, տե՛ս ուշ երկաթագիր Գ → Դ եւ Տ → Բ. Սուրբեանի տողատակի ծանոթագրումն է «Այլ Օր. իբրեւ զգետ» ըստ լայնութեանն)
- 13 V կգ
- 14 V ԺԷ, S եօթնեւտասն փյա եւթնեւտասն (վեր. ըստ յաջորդների, տե՛ս նախ. Ա.8, Բ.10, 16, 18)
- 15 V յկգ
- 16 V ց.եկիւք
- 17 V 2
- 18 Համառօտում էլ է նոյն՝ վատ ընկալելի «մերձ (ADEV⁴ մեծ) շուրջունողութեամբ (DPV² շուրջունելութեամբ)»-ը. բայց, գուցէ, «մերձ» = վրիպեալ «մեր ձ[եւերի]»-ը. հմմտ. նախ. Ա.7, 8, Ե.312
- 19 V-ում Ի-ն գլխատառով է եւ կարմրով, որ պարբերութեան նշան է
- 20 V Դեորոս, S Դիոդորոս փյա Դեո[դո]րոս (վեր., տե՛ս Դեոդորոս. համառօտում՝ «Դիոդորոս (E Դեդորոս, DV⁴ Թեդորոս) Սամեացի (AE Սամեացի, DV⁴ Սամոսացի)»)
- 21 V Լիկիկոն, AE Լիմեդիկոն, DPV Լիմեդիկոն, S Լիմիդիկոն փյա Լիմեդիկոն (վեր. ըստ DPV. Պտղոմէոսի մօտ Λιμυδικήν է)
- 22 Սուրբեանը տողատակում ծանոթագրել է «Ալսիւքն եւ Յուլն եւ Բազմաստեղքն (Pleiades)»
- 23 V զՊղազա, S զՊղադա փյա զՊղայիդայի (վեր.՝ ըստ համառօտի APV-ի (E զԼայիդա, DV³ զԼուդա). տե՛ս ուշ երկաթագիր Բ → Բ եւ Դ → Դ)
- 24 V-ի Ի-ն կարմիր գլխատառով է եւ կրկնակէտից յետոյ, որ պարբերութեան նշան է (վրիպեալ)